Արձանագրություն N 3

Ջեռուցման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատողի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 մայիսի 2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Համբարձումյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Ղասաբօղլյան/գնահատող/, Մ. Վաթինյան/գնահատող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գասպարյան /բացող/, Հ. Մարտիրոսյան /բացող/
Ի. Եղիազարյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

(Ա. Համբարձումյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/36» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցներից ներկայացել է «Թերմո-Ֆիթ» ՍՊԸ-ն:

Բանակցությունների համար սահմանվել է տասնհինգ րոպե ժամանակ «Թերմո-Ֆիթ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամանակում չի ներկայացվել նախահաշվային գղնին հավասար գնային առաջարկ /Հավելվածը կցվում է/:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նշված 1-ին չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

2.«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/36» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Ա. Համբարձումյան)

2.1 Հիմք ընդունելով մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել է հետևյալ կերպ.

h/h	Մասնակիցների անվանումը	Հայտի գնահատականը
1	«Ներսես և ընկերներ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Գնանշման հարցում ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա. Համբարձումյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/36» ծածկագրով գնման ընթացակարգի երկրորդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ա. Համբարձումյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Համբարձումյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից պատասխան ստանալու հաջորդ աշխատանքային օրը, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Համբարձումյան

Անդամներ՝ ---------- Ռ. Ղասաբօղլյան

---------- Մ. Վաթինյան

---------- Ա. Գասպարյան

---------- Հ. Մարտիրոսյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան

Հավելված N 1.2

Ջեռուցման համակարգի սպասարկման ծառայություններ ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/36 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության թիվ 3 արձանագրության

ք. Երևան

17 մայիսի 2019թ.
Ժամը 10:30

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացված բանակցությունների ընթացքում՝ «Թերմո-Ֆիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Գնման առարկայի անվանումը	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ ՀՀ դրամ	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ ՀՀ դրամ	Ստորագրություն
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ջեռուցման համակարգի սպասարկման ծառայություններ	495.000	449. 000	

«Թերմո-Ֆիթ» ՍՊԸ

Մասնակցի անվանումը (անունը) (պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը